

22284

396  
F-42

1900

2010

398  
Բ-42

Գ. ԲԵՇՈՅԱՐԱՋՈՎ.

373

# ԿԱՆԱՆՑ

## ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԵԱՆ

ՊԱՍԻՆ

(Հ 114)  
Հ 132

(Հրապարակական դասախոսութիւն)

Թարգմ. Ա. Կասեան.



Բ. Ա. Գ. Ա. Կ.

Տպարան Յ. Գ. Գիւլյանարեանի

1900

300


9. ԲԵՐՈԲՐԱԶՈՎ.

$$\begin{array}{r} 396 \\ \times 49 \\ \hline 4.41 \end{array}$$

49  
Ա. Ա.  
**ԿԱՆԱԳԻ ԳՐՈՒԹԵԱՆ**  
**ՄԱՍԻՆ.**

Հրապարակական դասախոսութիւն)

Թարգմ. Ս. Կասես



ՏԱ. Գ. Ա. Բ.  
Տպարան Յ. Գ. Գիւլբասարեանի  
1. 2. 3.

8030  
008

Дозволено цензурою. Тифлисъ, 17 января 1900 г.

Աան հարցեր, որոնք յաւիտենական են. դբանք երբեմն հանդարտում-սառչում են, երբեմն էլ սուը բնաւորութիւն ստանում և, չնայած իրենց ալեոր հնութեան, միշտ զբաղեցնում ե յուզում են հասարակութեան: Հասարակաց բարոյականութիւնը, սոցիալական ճշգրիտ կազմակերպութիւնը չեն կարող չհետաքրքրել իւրաքանչիւր մտածող մարդուն: Հէնց այդպիսի այրող հարցերին է պատկանում և այսպէս կոչւած՝ կանանց հարցը: Սա ունի իւր երկար պատմութիւնը, սկսած հին Յունաստանից, աթէնացի կողականացի փորձից, որը սակայն անյաջող անցաւ. դա կոնց առաջի պատերազմն էր անկախութեան համար: Թէև այդ հարցը ունի ընդարձակ զբականութիւն, թէև կինը աարել է փայլուն յաղթանակներ, բայց և այնպէս կանանց հարցը տակաւին հեռու է լուծումից և կարօտ է մանըամասն ու բազմակողմանի քննութեան:

Մարդկութեան ուղիղ ու յաջող զարգացման համար կանանց դրութիւնն ունի ահագին նշանակութիւն: Մի շաբք օրինակներով կարելի էր ապացուցել, թէ այն երկրներում, ուր կինը աւելի ազատ է, աւե-

լի անկախ է տղամարդուց, այնտեղ բարքերն աւելի մաքուր ու բարւոք են, քան այն տեղերում, ուր նա զտնուում է ստրկութեան մէջ: Եւրոպական ոչ մի տէրութեան մէջ կինը չէր պահուում այնպիսի խստութեան ներքոյ, որպիսին էր Բիւգանդիոնում, ուսկից մենք քիչ սովորոյթներ և հասկացողութիւններ չենք փոխառել, և ոչ մի տեղ թերես չի եղել բարքերի այնպիսի այլասեռումն, ինչպէս այդտեղ: Կնոջ համարում էին սատանայի ծնունդ, մարդկութեան ցեղը մեղքի մէջ ձգող, թոյլ ու կեխտոտ էակ, որին հախասահմանւած է լինել տղամարդու սպասուհին և ստրուկը: Կինը երբէք չի եղել ինքնորոյն, երբէք չի ունեցել իրաւունք ոչ իւր սեպհական անձի, ոչ էլ գոյք ու կայքի վրայ: Մինչև ամուսնութիւնը նա ամբողջովին հօր ստորագրեալն էր. ծնողների կամքով մարդու գնալուց յետոյ, այն էլ այնպիսի մարդու, որին մինչև պսակելն չի էլ տեսել, ամբողջապէս ընկնում էր ամուսնու ստորագրութեան տակ: Մինչև անգամ իւր սեպհական տանը կնոջ ազատութիւնը սահմանափակ էր. տանը մի առանձին մաս յատկացրած էր նրան, ուսկից նա իրաւունք չունէր դուրս գալ, երբ իւր մարդու մօտ հիւրեր էին լինում: Այդ խիստ հսկողութիւնը պէտք է բացատրել ոչ թէ կանանց իրը թէ բնածին անբարոյականութեամբ, այլ հէնց տղամարդկանց յատուկ անբարոյականութեամբ: Բիւգանդիացիք թոյլ չէին տալիս իրենց կանանց մտնելու տղամարդկանց շրջանները, որովհետև կնոջ

մէջ տեսնում էին միմիայն զւարճութեան առարկայ, չէին կարողանում երեակայել, որ կանանց հետ կալելի լինի խօսել առանց կեխտոտ նպատակների: Բիւգանդիացիք կինը զրկւած էր ամեն տեսակ բանաւոր զբաղմունքներից, կրթութիւնից. նա որոնում էր իւր բաւականութիւնը միայն մի՛ իւր զարգացման մատչելի զբաղմունքի մէջ—անասնային ժամանցութեան մէջ, որը սովորեցրել էին նրան իրենք տղամարդիկ: Մարդու էին գնում առանց սիրոյ, և այդ ամուսնութիւնը յօժարակամ՝ դաշն չէր, բայց միայն միջոց անառակութեան դէմ, հարկաւ, հեշտ մերժող միջոց: Կրթութիւնը, որ կամաց-կտմաց սկըսում էր ստանալ կինը, ազատութիւնը, որը նա ստացել էր, ցոյց տևեցին առաջադիմութեան նշոյներ և կինը իւր բարոյական պարտաւորութիւնների վրայ սկսեց նայել ուրիշ ակնոցով: Բայց միթէ ձեռք բերած այդ առաջադիմութեամբ պէտք է վերջացած համարել կանանց կրթութեան ու ազատութեան դորձը: Կարո՞ղ ենք հանգստանալ, կարո՞ղ ենք ասել, որ երկու սեռի ներկայացուցիչների յարաբերութիւնները կանոնաւոր են, կարո՞ղ ենք պնդել, որ ապրում ենք այնպիսի հասարակութեան մէջ, որը կառուցւած է բարսոյական սկզբունքների վրայ:

Կանանց դրութեան վերաբերեալ դատողութիւնների մէջ ամենաառաջի տեղը բռնում է սովորաբար այն խնդիրը, թէ ինչ պէտք է անէ կինը, ինչ է կարող նա անել, պիտի ունենայ նա մասնակցութիւն

հասարակական գործնէութեան մէջ, թէ, ընդհակառակը, պիտի սահմանափակվի ընտանեկան գործնէութեան շրջանակով: Խօսքը, հարկաւ, կանանց աշխատանքի մասին է, մի աշխատանք, որ գլխաւորապէս վերաբերում է հասարակութեան բարձր ինտելիգենտ խաւերին: Այդ տեսակէտից կանանց հարցը չի ներկայացնում ընդհանուր հետաքրքրութիւն, չունի ընդհանուր նշանակութիւն. Նա չի վերաբերում այն կանանց, որոնք չեն ցանկանում աշխատել, բայց այդպիսիները շատ են, ասել է՝ նա չի վերաբերում ժողովուրդին: Այդ գաղափարը, որ ինտելիգենտ կանանց շրջաններում յամառ մաքառում է առաջ բերել, արդէն վազուց գոյութիւն ունի ժողովուրդի մէջ: Իւրաքանչիւրն՝ առանց սեռի տարբերութեան՝ պէտք է աշխատէ, առանց աշխատանքի իրաւունք չունիս ապրելու—ահա ժողովուրդի ակսիօման: Երկրագործութեան ու գործարանական արդինաբերութեան համար կանանց աշխատանքն անհրաժեշտ է ոչ թէ միայն այն պատճառով, որ բանւորը մենակ անկարող է՝ իւր ընտանիքը սնուցանել, բայց և այն հիման վրայ, որ առանց կանանց աշխատանքի մարդկութիւնը չերկարող ունենալ բաւականաչափ գիւղական ու գործարանական արտադրութիւններ, մեր կարիքները չէին կարող բաւականութիւն ստանալ: Եթէ կինը շրանէր դաշտերում, գործարաններում, երկիքը կարտադրէր հացի անհրաժեշտ քանակութեան միայն կէսը, մեզ չէր բաւիլ զգեստներն, ոտնամաններն և այլ ամենա-

անհրաժեշտ առարկաները: Հասարակութեան ստորխաւերում կնոջ ընդունակութիւններն երբէք չեն թարկւել կասկածի: Նա ոչ թէ միայն իրաւունք ունի, այլ և պարտաւոր է բանելու ըստ իւր ֆիզիքական ուժերի. մտաւոր աշխատանքով, որ նրա համար իսկի գոյութիւն չունի, ժողովուրդը չի էլ հետաքրքրուում:

Կանանց այդ տեսակի աշխատանքին նոյնպէս անդաբեր են աշխարհային գրօսանիքներին սիրահար կանայք, որոնք այս երեկոյթից այն հանդէմն են թոշկոտում, լրջօրէն գրադում են միայն իրենց տուալիտով և մտածում այն բանի մասին, թէ ինչպէս իրենց դէմքը գոյներով գեղեցկացնեն: Միևնոյն չէ զրանց համար, թէ կինը կարող է արդեօք բժիշկ, զեղափառառուհի, պղոփհասոր լինել, թէ ոչ: Հետաքրքիր չէ այդ և այն յարգելի ու առաքինի դամերին, որոնք չեն ընդունում կնոջ վերաբերմամբ մի այլ կոչում, բայց եթէ ընտանեկան կեանքը, որոնք իրենց ամբոջ կեանքը անցուցանում են միայն խոհանոցում ու մանկանոցում:

Սակայն կանանց հարցն ունի նաև մի այլ կողմ, որը վերաբերում է բոլոր կանանց, առանց բացառութեան, թէ շինական գեղճկուհուն և թէ քաղաքացի դամային: Երբ խօսքն ազնւութեան, բարոյական սկզբունքների վրայ է, զանագան կուսակցութիւնների, քաղաքական տարբեր համոզմունքների մարդիկ պիտի միանան: Պահպանողականներն ու ազատամիտները չեն կարող բաժանւիլ այն կարծիքների վերա-

բերմամբ, թէ ո՞րն է լաւ և ո՞րն է վատ, ո՞րն է բարյական և ո՞րն է անբարոյական։ Դարձնենք մեր ուշադրութիւնն այնպիսի անվիճելի՝ թէն ոչ ընդհանրացած՝ ճշմարտութիւնների վրայ, աշխատենք գտնել այն հողը, որի վրայ կինը կարող է ամուր կենալ, աշխատենք գտնել մեկման կէտը, ուսկից պէտք է սկսւի կնոջ բոլոր գործնէութիւնը։

Գիտութիւնը մի բարիք է. իւրաքանչիւրին անհրաժեշտ է կրթութիւն—սրանք մի այնպիսի անհերքելի ճշմարտութիւններ են, որ ամօթ է նոյն իսկ կրկնել, սակայն մարդ ստիպւած է կրկնել, երբ խօսքը կնոջ մասին է։ Կանանց կրթութեան նկատմամբ պէտք է հոգան, ենթադրելու է, ամենից աւելի այն անձերն, որոնք համարում են կանանց ստոր արարած, սիրում են անւանել նրանց գեղեցիկ բայց թոյլ սեռ, թոյլ՝ թէ ֆիզիքապէս և թէ ստաւորապէս։ Իրօք, ումն է աւելի անհրաժեշտ կրթութիւնը՝ հանճարին, թէ միջին ընդունակութիւնների տէր մարդուն։ Մենք գիտենք այնպիսի ինքնուս կամ բոլորովին թերի կրթութեան տէր մարդիկ, որոնք, իրենց բարձր ընդունակութիւնների չնորհիւ, դարձել են նշանաւոր զրոյներ ու օգտակար գործիշներ։ Հանճարեղ մարդն ամենից քիչ է կարօտում դպրոցին։ Նրա ուժեղ խելքը իւր լաւագոյն առաջնորդն է, ինքը կեանքը ուսուցանում և զարգացնում է նրան, տաղանդը փոխարինում է տպրոցական պատրաստութեան։ Աւելի թոյլ, սովորական խելքը կարօտում է զարգացման, այլապէս նա անկարող կը

լինի ուղղել իւր գործնէութիւնը դէպի գիտակցական կողմը, չի հասկանալ կեանքի իմաստը, չի կարող տարբերել ճշմարիտը ստից, կիսառնէ բարին շարի հետ. չոնենալով ոտերի տակ բարոյական ամուր հող, նա միշտ կտատանի։

Ենթադրենք, որ կնոջ ուղեղն իւր կշիռով աւելի թեթև է տղամարդու ուղեղից, որ նրա մտածողական ընդունակութիւնը հինգ ի բնէ թոյլ է, նա անընդունակ է ստեղծագործութեան։ Հետեօւմ է զրանից, որ մենք պիտի թողնենք նրան տղիտութեան մէջ, օգտինք նրա թուլութիւնից, շահագործենք նրա անգարգացութիւնը։ Պիտի ցանկանանք, որ մեր մայրերը, մեր կանայք մնան զարգացման ամենաստոր աստիճանի վրայ։ Կանանց ամենասոխերիմ հակառակորդներն անգամ շեն հաշտում այդպիսի ցանկութիւնների հետ, այդ արդէն կ'յիշեցնէր ամերիկացի պլանտատորների յարաբերութիւնը նեգրների հետ, որոնք վերջիններիս—սրանց մորթու ամբախտ գոյնի չնորհիւ—համարել են միանգամ ընդ միշտ բացառապէս ստրկութեան ընդունակ էակներ և վախենում են տալ նրանց կրթութիւն ու զարգացում, որպէս զի շբացւի նրանց աշքերը և չ'ասկանան, թէ որպիսի լիբր կերպով են իրենց շահագործում։ Ներկայումս չ'կան այլևս մարդիկ, որոնք պարզերես պաշտպանէին կանանց տղիտութիւնը, որպէս չ'կան մարդիկ, որոնք պաշտպանէին ճորտութեան իրաւոնքները։

Բայց յանախ ասում են. ինչ պէտք է աղջկան

իմանալու լատինական քերականութեան նըբութիւնները կամ մեծ հմուտութիւն պահանջող ալգերական խնդիրների լուծում: Հասկանալի է, թէ ինչու հասարակութեան մէջ ժագում են սոյնանման հարցեր. երբեմս թւում է, որ դպրոցում սովորեցնում են այն, ինչ որ հարկաւոր չէ, իսկ այն, ինչ որ հարկաւոր է, չեն սովորեցնում: Աւելի անհասկանալի է, թէ ինչու մի որևէ զիտութիւն համարւում է օգտակար տղայի համար և անպէտք աղջկայ համար: Տղամարդկանց մեծամասնութիւնը կեանքի մէջ չի իրակործում ալգերական այն բարդ ֆորմուլները, որոնց ձեռք են բերել զիմնազներում. շնայած զրան, ոչ ոք չի ժխտում մաթեմաթիկայի օգուտները: Դասականութիւնն (կլասսիցիզմ) ունի իւր լաւ ու վատ կողմերը, դասական սիստեմը պահանջում է վերաքննութիւն, մի բան, որ համարեա բոլորն էլ անհրաժեշտ են գտնում: Ապագայ այդ վերաքննութեան ժամանակ պէտք է կամ հիմնովին փոխել կրթութեան այդ ձեռք, կամ ընդունել, որ դա երկու սեռի համար էլ պիտանի է: Այժմ ընդհանրութեան կողմից ընդունւած է, որ կինը իրաւունք ունի միջին կրթութիւն ստանալու: Ուրեմն ինչու համար օրիորդաց գիմնազը պէտք չպիտի ու նենայ հին լեզուների, քանի որ տղայոց զիմնազն անմիտ է առանց դասականութեան: Երբ կ'մշակվի միջնակարգ դպրոցի մի նոր տիպ, այդ միենոյն տիպը պիտանի կ'լինի թէ տղաների և թէ աղջիկների համար: Այնքան էլ կարեոր չէ թէ ինչ են սովորեցնում, կա-

ըմորակոյնն է ինչպէս են սովորեցնում: Անմտութիւնն է ասել, որ կանանց կրթութիւնը պահանջում է այլ մանկավարժական եղանակներ, քան այն, որը դործ է ածւում տղայոց դպրոցներում: Եթէ նկատի շառնինք ուտիլիտար նպատակներ, կընդունենք որ գիմնազը տալիս է մանկանց մի յայտնի գարգացում և ծառայում է իրեն պատրաստարան բարձրագոյն դպրոցների համար:

Մենք ասացինք, որ գիմնազը միջնակարգ դպրոց է, որը մարդիկ է պատրաստում համալսարանի համար. տղամարդկանց նկատմամբ դա անվիճելի ճշմարտութիւն է, իսկ կանանց... սրսնց համար անվիճելի ճշմարտութիւնները դառնում են վիճելի: Գիմնազը պէտք է զարթեցնէ աշակերտների մէջ իմացութեան (ՅՀԱԿԻԵ) ծարաւ, և վատ են այն ուսուցիչները, որոնք չեն կարողանում այդ անել: Գիմնազուհին, ստարտելով ուսման ընթացքը, նոյնպէս զգում է հոգեկան ծարաւ, նա ցանկանում է նոյնպէս կատարելագործւել, բայց այս դէպրում նրան ասում են. այդ էլ բաւական է, ինչիդ է պէտք բարձրագոյն կրթութիւն: Ուրեմն օրիորդաց դպրոցների դասատուները պէտք է աշխատեն ամենից առաջ, որ զիտութիւնը ձանձրացնէ աշակերտուհիներին, որպէս զի նրանց մէջ առաջ շը գայ անիրազործելի ցանկութիւն:

Ճատերն իրաւամբ հաւատով չեն վերաբերւում երիտասարդութեան այն մասին, որը բաւականում է միջնակարգ ուսմամբ կամ յաճախելով մի տարի

համալսարան, թողնում է կիսատ ու հեռանում: Այդ տեսակ մարդիկ կարծում են շատ բան գիտեն, սա- կայն, իրօք, ոչինչ չգիտեն, դրանք չեն կարողանում տարբերել կարծեցեալ գիտութիւնը ճշմարիտ գիտու- թիւնից: Երկրայելի ու վիճելի ենթադրութիւնները նրանք ընդունում են իրեւ անպայման գիտական ճշմարտութիւններ: Այդ պատճառով էլ հէնց ճիշտ է նկատած, որ թերի իմացութիւնն աւելի վնասակար է, քան տղիտութիւնը: Անուսները գոնէ ուրիշներին չեն լուսաւորում իսկ թերուսները մտնում են այդ ճեղոսութեան մէջ: Դրանցից գուրք են զալիս թուղթ մըոտողներ և, հեղեղելով իրենց մըոտումներով մանր մամուլն, ապականում են հասարականութիւնն, որը սովորոյթ է զարձել հաւատով վերաբերել իւրաքան- չիւր տպագրական խօսքին: Այդ թերակիրթ անձնա- շիւր տպագրական խօսքին պաշարը չնշին է իսկ կա- ւորութիւնների մտային պաշարը չնշին է իսկ կա- րիքն ահագին: Նրանք չունին անկաւոր (կարեսը) զարգացում, հետեապէս չունին էլ բարոյտկան զա- զարգացում, հետեապէս չունին էլ բարոյտկան զա- զարգացում: Նրանք, կամենալով օգտւել նիւթական յունութիւն: Նրանք, կամենալով օգտւել նիւթական յունութիւն:

Բայց կնոջ համար այդ բոլորը զարհուրելի չէ. քիչ իմացութիւնն էլ կբաւէ նրան: Թոյլ տալով կնոջը պատուի համն առնելու, մի պտուղ, որ երկար տարի- ներ արգելւած էր, խլում են աւելի շուտ, քան նրան յաջողում է կշտանալ:

Ի հարկէ, զիտնականներն էլ մի յայտնի չափով մեղաւոր են, երբ մարդիկ այնպէս անհաւատով են վերաբերում նրանց գիտութեան, երբ գտնում են, որ գիտութիւնն աւելորդ մի զարդ է մարդկութեան մի ամբողջ մասի համար: Կան վերին աստիճանի հնարագէտ մարդիկ, որոնք, կարդալով հին դարերի ամենամեծ գրական վաստակները, տեսնում են սրանց մէջ միայն քերականական տեսակէտից ուղիղ կամ սխալ կազմած նախադասութիւններ: Նրանք երկար ու ձիկ տարիներ աշխատում են Սոֆոկլէսի ողբեր- գութիւնների վրայ, արտագրում են գլքի մէջ եղած բոլոր նախդիրներն և մեծ եռանդով համբում, թէ այս ինչ նախդիրը քանի անգամ է գործածածած, այն ինչը քանի և որ հոլովի հետ. ողբերգութիւնների բովանդակութիւնն, Անդիգոնի կամ Էդիպի ընաւո- րութիւնները նրանց չի հետաքրքրում: Ի՞նչ պէտք է նրանց դեկուրա: Խեղճ Սոֆոկլէս: Եթէ նա գիտնար, որ իւր երկերը պիտի ծառայէին բառերի ընտրու- թիւնների համար, որ իրեն պիտի կշտամբէին դպրո- ցական քերականութիւնից ամենաչնչին շեղումի պատ- ճառով, քերականութիւն, որի մասին նա զաղափար անգամ չունէր, դէռ իւր կենդանութեան ժամանակ նա կ'ոչընչացնէր իւր անմահ զբամաները, միայն թէ դրանք չենթարկւէին XIX դարի կեղծ-գիտնական- ների ծաղրանքին: Կան պատմաբաններ, որոնք թո- թափում են զարերից ի վեր կուտակւած փոշին մա- տենալարանների ծեռագրերի վրայից, մեծ աշխա-

տանք թափում որոշելու վաղեմի ծեռագիրն, որպէս զի յայտնեն գիտութեան վերջի խօսքն, այսինքն՝ ինչպէս են եղել շինած զանազան գործիքներ, որոնցով մարդկանց տանջանքների էին ենթարկում։ Կան և այնպիսիներ, որոնք ընդունում են պատմութեան մէջ միմիայն ժամանակագրութիւն։ Դրանք վատնում են իրենց անսահման իմաստութիւնն ու սրամտութիւնը, որպէս զի ապացուցեն, թէ այն ինչ աննշան գէպը պատահել է մայիսի 29-ին, այլ ոչ 30-ին։ Կան բնագէտներ, որոնք իրենց ամբողջ կեանքը նւիրում են գորտի լեզուի կազմութեան ուսումնասիրութեան։

Եյդ տեսակ գիտական անուն կըող զբաղմունքներն ոչ մի ընդհանուր կապ չունին գիտութեան հետ, որովհետեւ չեն կրում իրենց մէջ գիտութեան գլխաւոր տարրը—նպատակը։ Իրաւացի են ասում, որ գորտի լեզուն, Սոֆոկլէսի գործածած նախդիրների քանակութիւնը ժամանակագրական հետազօտութիւնները կութիւնը ժամանակագրական արկան է հարկաւոր չեն կնոջ։ Բայց ումն է հարկաւոր այդ հարկաւոր չեն կնոջ։ Բայց ումն է հարկաւոր այդ զասի-գիտական աշխատութիւնները, այդ մասնագիտական ու պայմանական և քանի մի ընտրեալներին հասկանալի լեզուվ զբած հետազօտութիւնները, վահանականալի լեզուվ զբած հետազօտութիւնները, որ բացում է աշըին, իրօք բարերար, գիտութիւն, որ բացում է աշըին, ստեղծագործութեան օբէնքները, որ մարդու խարհի ստեղծագործութեան է վեհ զաղափարներ, բացում է հոգու մէջ սերմանում է վեհ զաղափարներ, բացում է հոգու մէջ սերմանում է վեհ զաղափարներ, որը առաջնորդում է իդեալով, և

տանում է մեզ գէպի բարոյական կատարելութեան։ Այդ գիտութիւնը չունի հայրենիք, նա պատկանում է ամբողջ աշխարհին, որովհետեւ համաշխարհային շանքերի արդինք է դա։ Հրաժարւելով արդի սխովաստիկայի ներկայացուցիչներից, մենք կարող ենք սովորել եւրոպայի մեծ գիտնական լուսատունների մօտ։ Բայց իրաւոնք ունենք զրկելու կանանց այդ լոյսից։ պարտաւոր չենք արդեօք, ընդհակառակը, տալ նըրանց միմնոյն միջոցները զարգացման համանելու համար, որոնցով մենք ինքններս ենք օգտւում։ Երեակայեցէք ձեզ մի այսպիսի բան. գտնւել է նոր, անսովոր ոյժ ունեցող հանքային ազբիւր և սրանից օգտւելու իրաւոնք տրւել է միմիայն տղամարդկանց, իսկ կանանց իրենք սփոփանք՝ ասում են. ձեր կազմութիւնը աւելի թոյլ է, այնպէս որ գուք կարող էք օգտւել ուրիշ աւելի թոյլ աղբիւրներից իսկ։ Ամենքն էլ կը բողոքէին այդ բառբառող անիրաւութեան զէմ։ Ճիշտ այզպէս են տրամաբանում մարդիկ կանանց կը թութեան նկատմամբ։

Եթէ կնոջ առջև բացէին համալսարանի գոները, նա պիտի օգտւէք սրանից տղամարդկանց հետ հաւասար իրաւոնքներով։ Ինչո՞ւ ուսումնասիրել իրաւագիտութիւնը, եթէ չի կարելի փաստաբանի պաշտօն վարել, ինչո՞ւ սովորել մաթեմաթիկա, եթէ չես կարող ինժեններ լինել։ Այսպէս են, հաւանականաբար, մտածում շատերը, որոնք կարծում են՝ թէ գիտութիւնը նեղ կապւած է կոչումի ու աստիճանների

հետ. սակայն սովորական մտածումների մէջ թիւրի-  
մացութիւն է թագնւած: Համալսարանն ու դիպլոմը  
այնպէս էլ անբաժան չեն կապւած, ինչպէս այդ  
թւում է շատերին: Պրոֆեսորները չեն սովորեցնում  
թէ ինչպէս պէտք է զրել խնդրագրերն ու ծանու-  
ցագրերը, ուր պիտի կպցնել դրօշմանիշերը (ըրծած  
մարկա), չեն սովորեցնում բարեկելու նըրութիւնները,  
բայց սրանք անհրաժեշտ են շինունիկի համար: Ճա-  
տերը մտնում են համալսարան առանց մի որևէ է գի-  
տութեան հակումն ունենալու, որպէս զի ստանան  
դիպլոմ և ապա մի փափուկ պաշտօն: Այդպիսիներն  
աշխատում են որքան հնարաւոր է էժան ձեռք բերել  
դիպլոմ, այսինքն՝ որքան հնարաւոր է քիչ պարապել:  
Այդ պատճառով էլ համալսարանական դասախոսու-  
թիւնները տեղի են ունենում մէկ ու կենդ լսողների  
համար իսկ սրանց մեծ մասը բաւականանում է լի-  
տոգրաֆիայով հրատարակած տետրները զոց անելով:  
Դիպլոմ տալու համար հարկաւոր են թւանշաններ,  
հարկաւոր է քննութիւն, մի գործողութիւն, որը տան-  
ջանք է պատճառում թէ ուսանողներին և թէ պրո-  
ֆեսորներին: Ընդհանուր զարգացումն անկարելի է  
գնահատել թւանշանով, հարկաւոր է պահանջել յայտ-  
նի իմացում, դրա չնորհիւ էլ դիպլոմ պէտք է տալ  
նրան, ով մեքենական կերպով յիշում է պրոֆեսոր-  
ների ասածների կէսը կամ երրորդ քարորդական  
մասը, որքան էլ չնշին լինի քննուողի զարգացումը  
իսկ, ընդհակառակն, այն ուսանողը, որը շատ մտա-

ծել ու աշխատել է բայց սակաւ է շարշարւել տետրը-  
ներ զոց անելու, կարող է մալ առանց դիպլոմի:  
Եթէ համալսարանը չծառայէր իրեկ նախադրու շի-  
նովնիկական կարիերայի, կարելի է որ շատերը չվա-  
գէին դէպի նրան, զրա փոխարէն մտնողները սիրով  
կ'նւիրէին գիտութեան, որովհետև նկատի չունին  
ապագայում զբասեղանապետ (столовоначальникъ) գառ-  
նալու: Գուցէ այդ դէպրում բարձրագոյն ուսում ու-  
նեցող մարդկանց քանակութիւնը կ'նւագէր, բայց  
զրանց որակութիւնն անհամեմատ բարձր կ'լինէր, և  
այդ մի բուռն մարդիկ, նւիրելով գիտութեան հէնց  
զիտութիւնը սիրելով և ոչ թէ զանազան գործնական  
նպատակներ ունենալով, մարդկութեան համար աւելի  
շատ բան կանէին, քան այն ահագին մեծամասնու-  
թիւնը, որոնք ինչպէս էլ որ եղաւ լսում են պրոֆես-  
որների գասախօսութիւնները, ստանում դիպլոմ,  
իսկ յետոյ ընդ միշտ երես դարձնում գիտութիւնից,  
որպէս մի ինչ-որ բանից, որ լաւ է գալոցականի հա-  
մար, իսկ համալսարանականի համար անհրաժեշտ,  
որովհետև պահանջում է վարչութիւնը:

Եթէ գիտութիւնը մարդկային մտքէ անօգտա-  
կար ու անպտուղ արտադրութիւնն է, եթէ գիտու-  
թիւնը ինքն ըստ ինքեան արժէքից զուրկ մի բան  
է, մարդկային առաջադիմութեան համար ոչ անհրա-  
ժեշտ, փակենք դարձական բոլոր հիմնարկութիւն-  
ները, կրակի մատնենք բոլոր գրադարանները. բայց  
այն ատեն մենք ստիպւած կ'լինենք հագնելու վայրե-

նի կենդանու մորթի, վերագառնալու նախապատմական ժամանակները, կարճ մենք կ'անասնանք: Կանայք այդ աւելի լաւ են հասկանում, քան շատ տղամարդիկ. կինը դիպլոմի համար չէ կը թութիւն որոնում. նա ցանկանում է դարգանալ ու կատարելագործւել: Իրաւունք կտրւի նրան ծառայութեան մտնելու թէ ոչ, այդ երկրորդական հարց է: Ներկայումս հինգ դրւած է նրա առաջեքանի մի ասպարեզ. նա փայլուն կերպով ապացուցեց, որ կարող է լաւ բժշկուհի ու ~~տեղագործուհի~~ դառնալ, նա ցոյց տւեց ոչ սակաւ ծառայութիւններ մանկավարժական ասպարիգում, նա յայտնի դարձաւ պատերազմի մէջ զթութեան քրոջ դժւար դերում: Անդառնալի անցան այն ժամանակները, երբ արւեստով ու գրականութեամբ պարապելը նախատինք էր համարւում կնոջ համար, գրչով տողական վարձատրութիւն ստանալը ծիծաղելի թւում: Մենք ամենքս մեծ հաճոյքով ենք կարդացել տաղանդաւոր կանանց գրած վէպերը, իսկ վերջի ժամանակներս մենք տեսնում ենք կնոջ ստորագրութիւն և լուրջ յօդւածների տակ: Ի հարկէ այդպիսի յօդւածների թիւը նւազ է, բայց ցոյց տւէք պիտական արժողութիւն ունեցող մի գիրք, որ գրած լինի միջնակարգ կը թութիւն ստացած մի տղամարդ: Եթէ համեմատենք նմանը նմանի հետ, կտեսնենք, որ կին-հեղինակ քիչ չէ:

Կ'ստանայ կինը դիպլոմ կամ պետական պաշտօն ստանձնելու իրաւունք, այդ նշանակութիւն չունի.

աւելի նշանաւորն այն է, որ նա ձեռք բերի տղամարդու հաւասար մտաւոր զարգացում: Այս մտքի հետ պիտի ամենքն էլ համաձայնւեն, նրանք իսկ, որոնք սահմանափակում են կնոջ գործնէութիւնն ընտանիքի շրջանակով: Կարող է կինը լինել իսկական ամուսին, իսկական դաստիարակչուհի, երբ նա չի հասկանում իւր մարդու գործնէութիւնը, երբ նա՝ իրեւմայր՝ զարգացման միենոյն աստիճանի վրայ է կանգնած, ինչպէս զիմնագիստ-որդին: Միրոյ կապակցութեան, այսպէս անւանւած՝ ամուսնութեան մէջ պիտի թագաւորէ իրաւունքների հաւասարութիւն ամուսինների երկկողմեան երջանկութեան համար: Բայց ի՞նչ երջանկութիւն կարող է լինել այնտեղ, ուր մարդը ասում է կողակցուհուն. լուիր, որովհետեւ դու ոչինչ չես հասկանում. ուր կողակցուհին, իրօք, չի հասկանում այն իդեան, որին ծառայում է իւր ամուսինը, այն իդեալը, որին նա ձգտում է, եթէ ի հարկէ, ամուսինը այն անձերի թւին է պատկանում, որոնք տակաւին չեն կորցրել իդեալ ասած բանը: Երբ մանուկը մեծանում է, մայրը հօր հետ հաւասար իրաւունք պէտք է ունենայ ընդրել այս կամ այն դպրոցը: Դա զլխաւորապէս մօր գործն է, նա է աւելի երկար ժամանակ երեխաների հետ անցուցանում. նա ուսումնասիրել է մանկան հոգու բոլոր նըբութիւնները, նա աւելի լաւ՝ քան ամուսինը՝ ճանաշում է որդու ընդունակութիւնները: Մայրն է կարող իւր զաւակներին ուղղել դէպի օգտակար գործնէութիւն, նա է կարող

ընտրել նրանց հարմար դպրոց, եթէ նրան պարզ լինի գիմնազի ու զինտորական կորպուսի տարբերութիւնը, կլասսիցիզմի ու բեալիզմի տարբերութիւնը։ Մանուկները ոչ թէ միայն դպրոցումն են սովորում, այլ աւելի շատ ձեռք են բերում տանը։ Դպրոցական հիմնարկութեան մէջ կուսուցանեն նրանց մաթեմաթիկական խնդիրներ լուծելը, աշխարհագրութիւն, պատմական ֆակտեր, բայց ով պիտի սովորեցնէ նրանց սիրել ճշմարտութիւնը, բարութիւն անել, անձնագօն լինել, եթէ ոչ զարդացած մայրը։ Նա սիրով կ'զրուցէ լինել, եթէ մանուկների հետ ամեն օր, նա կ'բացատրէ նրանց, որ պէտք է յաղթել անձնական կըքերը, պէտք է օգնել խեղճերին, պէտք է ազնւաբար կատարել իւր պարտաւորութիւնները, որ էզօիզմի մէջ չ'կայ երջանկութիւն, որ առանց իդեալի, առանց սէրի, որից վեհ ոչ մի բան կայ աշխարհում, անկարելի է ապրել։

Մայրը կասէ այս բոլոըը, իսկ երեխանները կ'լսեն իրենց մօրը ոչ այնպէս, ինչպէս լսում են դպրոցի վարժապետին, և բարութեան սերմերը խոր արմատ կ'բռնեն նրանց սրտերում։ Երկար կ'յշեն նրանք այս գեղեցիկ ու քաղցր խօսքերը, և երբ նրանց մօր մարդկեցիկ ու քաղցր խօսքերը, և երբ նրանց մօր մարդինը վաղուց նեխւած կլինի գերեզմանում, նրա հոգին տակաւին կ'մնայ իւր զաւակների հետ, կ'մնայ սրանց հաւատարիմ դաստիարակիչն ու առաջնորդը։

**Ընտանիկան** կեանքում կնոջն անհրաժեշտ է զարդացում. սա անհրաժեշտ է նրան և հասարակական

կեանքի համար։ Կինը պէտք է հասկանայ հասարակութեան մէջ ծագող բոլոր հարցերը, որքան էլ սըրանք լուրջ լինին, նա պէտք է հասկանայ ինչ է կատարուում իւր շուրջը։ Նա պէտք է գիտնայ թի ինչ է՝ այսպէս կոչւած՝ մարդէակը և այն առընչութիւնը, որ ունի սա արտաքին աշխարհի հետ. կնոջը յայտնի պիտի լինին մտածողութեան օրէնքներն ու հոգու կազմութիւնը։ Կեանքի ներկայ պայմաններում մենք միշտ ընդհարուում ենք իրաւաբանական հարցերի հետ, կապիտալի ու աշխատանքի կուի հետ. ուստի, որպէս զի պարզ զաղափար ունենանք հասարակական կեանքի զանազան շրջաններում տեղի ունեցող բարտ շարժումների մասին, պէտք է ունենալ ամուր հող ուղիղ զատելու համար, պէտք է ծանօթանալ իրաւագիտութեան ու տնտեսագիտութեան հիմունքների հետ։ Ներկան՝ երկար անցեալի ամենավերջի մօմենտը՝ անբաժան կապւած է անցեալի հետ. արդ՝ ներկան հասկանալու համար, պէտք է գիտնալ մարդկութեան պատմական ընթացքը, պէտք է ծանօթանալ մարդկային մտքի ընդհանուր զարգացման հետ։ Ամենակարեռը գիտութիւնների հիմնական սկզբունքների իմացումն անհրաժեշտ է իրաքանչիւր կնոջ, ով ցանկանում է ստանալ իսկական զարգացում։ Մակայն այսպիսի ընդարձակ ծանօթութիւն չունին տղամարդիկն անգամ։ Այս, բայց մինք խօսում ենք այն բանի մասին, ինչ որ ցանկալի է, ոչ թէ՝ ինչ որ կայ իսկապէս։ Մեզնից շատերը ուսումնասիրել են

թւերի տեսութիւնն իւր բոլոր նրբութիւններով, միւս-ները լաւ գիտեն պատմութիւնը կամ քիմիան. բայց շատ է այն մարդկանց թիւը, որոնք կարող են ասել, որ իրենք լիովին բաւական են իրենց կրթութեամբ, հասել են զարգացման վերջի կէտին:

Միթէ չի պատահում, որ մենք չենք հասկանում մտքի նոր շարժում, չենք ընբռնում նոր խօսք, քար-կոծում ենք մարքարէին. քարանալով հնութեան ծո-ցում, մենք արհամարանքով երես ենք դաշնում նոր իդեալից, որին պատկանում է ապագան, խանում նոր քարոզների դիմաց, քարոզներ, որոնք կլու-սաւորէին մէզ, եթէ լսէինք ու հասկանայինք: Այս շի ապացուցում մեր զարգացման թերութիւնը: Թո՞ղ կինը գերազանցէ մեզ և մենք կ'խոնարենք նրա առջեւ: Այն ատեն մենք՝ կ'զատենք նրա հետ կարենը հարցերի մասին, այն ատեն մենք չենք ձանձրանալ կանանց շրջաններում: Նորածն զգեստների մասին կանանց խօսակցութիւնները, հուսարի գեղեցիկ բեխե-նրանց խօսակցութիւնները, ուրիշ խօսակ-րի մասին զրոյցները կ'փոխարինեն ուրիշ խօսակ-րի: Թէթևաօլիկ հետաքրքրութիւնները ու ցութիւնների: Թէթևաօլիկ հատաքրքրութիւնները բամբասանքներն այլևս չեն կարող աշքի ընկնող գեր բամբասանքներն այլևս չեն կարող աշքի ընկնող գեր խաղալ կանանց կեանքում. կինը ընկղմած կ'լինի այլ գործերի մէջ:

Արդ՝ ընտանեկան ու հասարակական կեանքի ծագկման բոլոր նախանձախնդիրները պէտք է նպաս-տեն կանանց կրթութեան: Եթէ գիտութիւնը բարիք է, նա պիտի ամենին և իւրաքանչիւրին հասանելի

լինի, առանց սեռի, իմացութեան ու դասակարգերի խտրութեան: Տարաբախտաբար մենք դեռ չենք հա-սել նայս գիտակցութեան: Դէպի լուսաւորութիւն ու բարօրութիւն տանող ճանապարհի վրայ կանգնած է մի հսկայ պատ, իսկ սրա ետեռում—պահապան: Այդ պատի վրայ շինւած են դարբագներ, որոնք սիրով բացում են տղամարդկանց առջեւ: Բայց ահա այդ պատին մօտենում է կանաց մի խումբ. անողոքելի պահապանը ձայնում է նրանց. «կանգնեցէք, մի շարժ-ւէք այլես, լուսաւորութիւնն ու ճշմարտութիւնը ձեզ համար չէ որ գոյութիւն ունին». այդ կանացը չեն կարողանում կանգնել, նրանց հրապուրում է լու-սաւորութիւնը, հրապուրում է ճշմարտութիւնը, որոնք պատի ետերից ժպտում են նրանց: Առաջի շարքում կանգնած կանացը կընթաւըն այդ ամուր պատնէշին, կ'խորտակւեն և այդպիսով կզօհւեն իրենց գաղափա-րի համար. սակայն միւսները կ'խորտակեն պատնէշը և մացած կանանց համար ճանապարհ կ'հարթեն, որոնք առաջ կերթան առանց արգելքի, վառաբանե-լով ընդհանուր գործի համար նահատակւածներին:

Կնոջ անհրաժեշտ է զարգացում, որպէս զի կա-րողանայ հասկանալ մարդկանց, որոնց հետ նա շրփ-ւում է, որպէս զի կարողանայ ճանաչել դիմացի ճո-ռոմաբանող տղամարդու աղքատ բովանդակութիւնը, որպէս զի սա չ'կարողանայ նրան մնաս հասցնել զանագան սովիեստութիւններով, անառակութիւնն արդարացնելու համար ստեղծած սուտ-գիտական

ճշմարտութիւններով։ Վերջապէս կնոջ անհրաժեշտ է զարգացում, որպէս զի նա հասկանայ, թէ ինչումն է կայանում իւր իսկական կոչումը, ինչ զեր է նրան վիճակած կատարելու մարդկութեան ընդհանուր բարօրութեան համար։ Դլխառըապէս ինչ բանում նա հաւասար իրաւունքներ պէտք է ունենայ տղամարդու հետ։ Իսկապէս, նայենք երկու սեռի ներկայացուցիչների բարոյական յարաբերութիւնների վրայ, խորը թափանցենք մեր ամենիս աչքերի առջե կատարող ամենօրեայ երկոյթների մէջ, մի բոսէ կանգ առնենք ու մտածենք, և մենք կ'սարսափենք արհաւերքից, տեսնելով մեր կեանքի անձունութիւնը։

Եթբ ցանկանում ենք որոշել արատաւոր մարդկանց, մենք գործ ենք ածում կանանց ու տղամարդկանց վերաբերմամբ միանոյն խօսքերը, փոխելով միմիայն վերջաւորութիւններն ըստ քերականութեան պահանջողութեան։ Ասում ենք՝ զող ու զողուհի, խաբերայ ու խաբեբայուհի, ստախօս ու ստախօսուհի. բայց եթբ խօսքը վերաբերում է բարոյական յարաբերութիւններին, բարոյականութեան դէմ կատարած ոճագործութիւններին, առաջ է դալիս կատարեալ ուրիշ տերմինոլոգիա և միանոյն գործողութիւնը, նայած թէ ով է կատարել՝ կին թէ տղամարդ, տարբեր անուններ են ստանում։ Օրինակի համար՝ խօսում են կանանց անկման մասին, բայց լսել էք երբեմիցէ տղամարդկանց անկման մասեն. ի հարկէ ոչ. այն վարմունքը, որ ունի սոսկալի կոչում՝ «անկում», տղա-

մարդկանց համար միայն անմեղ գւարճութիւն է, անհրաժեշտ ժամանց իսկ, որը բացատրում է նրա բնական պահանջողութեամբ։ Վարքն ընկած մի կնոջ թոյլ չի տրում ոտք զնել մի պատւտոր տուն. բայց մի տղամարդ, որ մէկ ծաղկից միւս ծաղիկն է ոստուտում, որ փոխում է իւր կապւածութիւնը (որովայանութիւն) ամեն ամիս, ամեն օր, նոյն իսկ կապւածութիւն ասած բանից գուրկ, որ միայն վայրկենական գւարճութիւն է որոնում, ասում ենք՝ այդպիսի տղամարդ չի կորցնում պատւաւոր մարդու վարքը, սրա ներկայութիւնը չի կարող կեխտութել ոչ մի հիւրասենեակ, թէկուզ վերջինս լինի երիտասարդ օրիորդներով լի, որոնց համար այնքան զարհուրեցուցիչ է այն կինը, որը, շեղւելով իւր կանացի ճանապարհից, հետեւ է մեզ, տղամարդկանց։ Սակայն հէնց այն է խնդիրը, որ կնոջ առաքինութիւնն ու տղամարդու առաքինութիւնը բոլորովին տարբեր բաներ են։ Անմեղութիւն—սա առաքինութիւն է աղջկայ համար, մինչև անգամ ոչ թէ առաքինութիւն, այլ աւելի շուտ պարտաւորութիւն, չնչին շեղում այդ պարտաւորութիւնից—արդէն արատ է։ Իսկ երիտասարդ տղամարդու անմեղութիւնը, տյդ ինչ է որ։ Ինչո՞ւմն է առաքինութիւնը, դա ուղղակի յիմարութիւն է, տարօրինակ խենթութիւն. դրա վրա ծիծաղում են։

Բարոյական գատողութիւնների ժամանակ մենք սովորաբար նայում ենք կատարւած փաստի վրայ և ասում, թէ դա լաւ է կամ վատ, առանց ուշադրու-

թիւն դարձնելու, թէ որպիսի անձնաւորութիւնն է կատարել՝ իգական թէ արական սեռից: Երևակայեցէք հիմա, որ մի իրաւաբան մի շաբք սովութիւններով համոզել է մի աղջկայ ստորագրել մի կեղծ մուրհակ. աղջիկը վերցնում է գրիչը, ինչ-որ բան է գրում նրա թելադրութեամբ, որ միայն կիսով շափ է հասկանում կամ բոլորովին չի հասկանում իւր արածը: Իրաւաբանը հարիւր անգամ մեղաւոր է, կասենք մենք բոլորներս, նա ունեցել է շար դիտաւորութիւն, նա կրթւած է իսկ աղջիկը անհասկացող. նա է հորդորել, համոզել, նա է և մեղաւորը: Բայց ահա միենոյն իրաւաբանը խելքից հանել է աղջկան, մեղքի տակ է ձգել սրան: Աղջիկն է ամբողջապէս մեղաւոր, կասէ հասարակութիւնը, նա պիտի զգուշանար, իսկ իրաւաբանի համար ինչ կայ, նա տղամարդ է: Մեր իրաւաբանը գլուխը բարձրացրած ժան կ'զայ, կ'զուայ կանանց թեթեամտութեան, անառակութեան մասին, իսկ խեղճ աղջիկը պիտի թագ կենայ աշխարհից, նրա վրայ մատով ցոյց կ'տան, նրա համար դա խայտառակութիւն է. իսկ իրաւաբանի համար. բայց ախը նա տղամարդ է:

Մեզ համար մանկութիւնից իվեր հետեւալ դարձւածը սովորոյթ է դարձել. ես տղամարդ եմ և ինձ ամեն ինչ թոյլատրւած է: Մեզ դաստիարակում են այսպիսի վայրենի հասկացողութիւններով, մենք էլ միենոյնը յանձնում ենք մեր մանուկներին, ուշադրութիւն չ'դարձնելով, արդեօք ինչ ենք սովորեցնում՝

ճշմարտութիւն թէ արագներ քողարկելու հնարագիտութիւն: Հոգացող մայրը խիստ պահպանում է իւր դստեր անարատութիւնը, նա վախենում է անպատեհ վարմունքից, անպատեհ խօսքից անգամ, աղջկայ ձեռքից խլում է կասկածաւոր գիրքը. իսկ միւնոյն հոգացող մայրը տալիս է որդուն դրամ և ասում է. «Գնա, անձնատուր եղիք քո կըքերին ուր և ինչպէս ցանկանում ես, թաւալւիք ցեխի մէջ, եթէ զգում ես դրանում պահանջ»: Որդու և դստեր մէջ ահազին տարբերութիւն է նկատւած: Որդին ալեկոծւած է կըքերով, նա չի կարողանում տանել իւր հեշտասէր բնազդները, անառակութիւնը նրա զոյութեան համար այնպիսի անհրաժեշտ պայման է, որպէս ժուժկալութիւնը աղջկայ համար: Եւ ահա երիտասարդը իւր թարմ տարիքներում, երբ դեռ տակաւին չէ կազմւել ֆիզիքապէս, չէ ամրացել բարոյապէս, զնում ընկնում է անառակութեան անդունդը, նւիրում է ցինիկական գլաճութիւններին: Այստեղ նա սովորում է ծառայել իւր մարմնին, արհամարելով հոգին, այստեղ նա թագում է իւր գեղեցիկ ձգտումները, իւր հաւատը դէպի իդեալը: Այսպէս վարւում է երիտասարդը, որովհետեւ ընդունած է սա, որովհետեւ բոլորն էլ այդպէս են վարւում: Իրօք, բոլորն էլ այդպէս են վարւում: Ոչ ոք չի կանգնեցնում երիտասարդին, ոչ ծնողներն ու դաստիարակները, ոչ ընկերներն ու ծանօթները: Հասարակութիւնից նա լուսն է միայն հաւանութիւն իւր արածների վերաբերմամբ, նա տուղջապահական կանոնների համաձայն է վարւում:

Եթէ մեզ թեր խօսէր բժշկական գիտութիւնն անդամ, այդ գէպքում իսկ պիտի հարց տանք մեզ՝ հարկաւոր է, պէտք է արդեօք երանացնել մարմինը ի վնաս հոգու: Աւելի լաւ չէ մարմինը նւազ, թոյլ լինի, իսկ հոգին հարուստ ու ամուռ: «Ճատ գեղեցիկ, կասէ կինը տղամարդուն, դուք ունիք կենդանական բնագըներ, որոնցից չի կարելի հրաժարւել, պէտք է ուտել և խմել, բայց թոյլատրելի է ամեն կերպ, ամեն միջոցներով հաղեցնել, ասենք հէնց, ամենաօրինական, ամենաբնական ախորժակը: Ունիք իրաւունք ուրիշի գոյութիւնը կործանելու ձեր սեպհական գոյութիւնը պահպանելու համար»: Բատ երեսյթին սա մի ունայն հարց է, որն ունի միայն մի պատասխան: Մարդակերութիւնն ընդունած չէ ամենախիստ սովի ժամանակ անգամ: Եթէ ես ցանկանում եմ խմել մի շիշ շանպանեան, կարող եմ անել այդ միայն թէ այլոց վնաս չ'հասցնեմ. որքան էլ որ ծարաւ լինեմ, այնուամենայնիւ թոյլատրելի չէ գինեզողութիւնը: Ո՞վ է ուրիշ տեսակ մտածում. ի հարկէ բոլորն էլ այսպէս են մտածում: Բայց խլել աղջկան մի ընտանիքից, ցմահ անբախտացնել նրան, հապշտակել նրանից խիղճ, անհառակացնել նրան մինչև ոսկորների ծուծը, որպէս զի ինքը ստանայ բոպէական քաղցրութիւն, սա թոյլատրելի է, սա իրերի «բնական շարքին» է պատկանում: Հապա ուր մնաց այն ատեն թոյլատրելիի և անթոյլատրելիի սահմանը. այն ատեն չկայ արատ, չկայ ոճրագործութիւն, չկայ բարոյա-

կանութիւն: Ես կարող եմ սպանել ուրիշի հոգին իմ մարմար համար, մինոյն իրաւունքով կարող եմ գողանալ ու սպանել: Դեն ձգենք բարոյական սկզբունքներին վերաբերող վէհ խօսքերը ու ապրենք հետեւալ նշանաբանին հետևելով. արա այն ամենը, ինչ որ քեզ հաճոյ է, միայն թէ լինիս բաւական, ամեն կերպ երանացը քո մարմինը, ցանկանում ես, ասել է՝ իրաւունք ունիս:

Մենք այդպէս էլ ապրում ենք: Մենք մինչև անդամ հնարել ենք մի շատ սրամիտ ֆրազ. երիտասարդութիւնը պիտի իրենը տանէ: Մայրերը ժպտալով խօսում են իրենց սիրելի արու զաւակների անող մանր ինտրիգների, բեֆերի մասին: «Ոշինչ, կը ամուսնանայ և կուզուզիւ. երիտասարդութիւնը պիտի իրենը տանէ», ասում է մայրը: Երիտասարդ տղամարդն անում է այն ամենը, ինչ որ խելքին փշում է, մինչև որ, վերջապէս, կձանձրանայ նրանցից, որոնց մեծ յաջողութեամբ անհառակացը ել է: Այն ատեն 30 տարեկան հասակում ճաղատ գլխով, հագեցած որպէս ծերունի, ֆիզիքապէս ու մտաւորապէս ուժասպառ եղած, սկսում է նա հարսնացու որոնել, այն էլ որքան կարելի է զեւահաս ու գեղեցիկ: Նա մօտենում է վերջինիս... նայեցէք. նրա դէմքի վրայ երկում են արբեցութեան, անմիտ քեֆերի, ցոփակեաց գիշերաբեցութեան, և նա հարցում է հարսնացուին. իստակ ես, անարատ ես, չես համբուրւել ուրիշների հետ: Իսկ ինքը. ինքը համբուրել է այնքան, որ շըր-

թունքները դարձել են անզգայ. նա ծիծաղում էր առաքինութեան վրայ, անհաւանական ցինիգմով նա ճգնում էր սպանել կնոջ մէջ ամօթխածութեան վերջի կայծը, իսկ այժմ պահանջում է իստակութիւն ու անարատութիւն, նա հարցնում է. արժանի է ինձ իմ ընտրեալը: Որպիսի անհաւատալի անամօթութիւն, որ կրկնում է ամեն օր, ամեն ժամ, և մենք չենք նկատում այդ, չենք ուզում նկատել: Բայց աղջիկը, միթէ նա չի զգում ինչպէս խստօրէն վիրաւորում են իրեն, միթէ նա չի հասկանում, որ իւր ամենասուրբ իրաւունքներն ոտնակոխ են անում: Իսկ եթէ աղջիկն էլ իւր կրղմից հարցնէ փեսացուից. դու էլ ինձ ասա՝ իստակ ես, անարատ ես...: Ինչո՞ւ համար հապա նա չի հարցնում իւր ապագայ ամուսնուց, ինչ որ իրեն բոլորն էլ հարցնում են:

Ահա ինչպէս են կատարում մեր ժամանակի ամուսնութիւնները: Էլ զարմանալու չէ, որ երջանիկ ամուսնութիւն շատ քիչ է պատահում, այնքան քիչ, որ ահազին մեծամասնութեան անբախտների շարքում նրանք կազմում են ամենաշնչին տոկոս, սակաւթիւ բացառութիւն, բայց ոչ ընդհանուր կանոն, ինչպէս որ պէտք է լինէլ: Մանկութիւնից այլանդակւած, բարոյապէս հաշմեցած տղամարդիկ կապւում են իրիտասարդ ուժերով լի, կեանքի ծարաւ աղջկայ հետ: Երիտասարդ կին-ամուսինը գործնէութիւն է որոնում, իսկ տղամարդ-ամուսինը—հանգստութիւն. վերջինս հոգնել է ոչ թէ շատ գործելուց, այլ անգոր-

ծութիւնից. սա վատնել է իւր ուժերը ամենատեսակ աւազականոցներում: Կին-ամուսինը իդեալական տեսակէտից է նայում կեանքի վրայ, իսկ տղամարդամուսնու համար իդեալ, հաւատ, սէր դէպի մերձաւորն, ինքնազօհութիւն վաղուց մոռացւած բառեր են: Առաջինը կարծում է, թէ ամուսինը իրեն է պատկանում մինչև մահ, բայց երկրորդը չի կարողանում իւր երիտասարդական սովորոյթներից ձեռք քաշել: Միևնոյն կինը ձանձրացնել ամեն օր միևնոյն առաջարկող կարող շանձրացնել ամեն օր միևնոյն թշերը, սուպը, միշտ միևնոյն մազերը, միշտ միևնոյն թշերը, միշտ միևնոյն շրթունքները: Բայց լաւ գաղափարը երբէք չի ձանձրացնել, բոլոր ուժերը, ամբողջ կեանքը կարելի է նւիրել նրան, նա յաւիտեան կմայքը կարելի: Գաղափարը չի ձանձրացնում, այն, բայց մենք ամուսնանալու ժամանակ գաղափարի համար չենք ամուսնանում: Ահա հէնց սրանում է ցաւը, սրանում է շարիքների արմատը:

Ամուսնութիւնը երկու մարմինների կապակցութիւն չէ միայն, այլև երկու հոգու, երկու սրտերի. երկու կեանք ու երկու մտածողութիւններ միանում են ընդհանուր գործնէութեան համար. այս կապակցութեան մէջ հոգեկան միաւորումը, հարկաւ, աւելի արժէք ունի, քան մարմնական միաւորումը: Բայց ճշմարիտ կապակցութիւնը հնարաւոր է միայն այն տեղ, ուր երկու մարդ միանում են ինքնայօժար, ուր տեղ, ուր երկու մարդ միանում են երկկողմեան յարգան-նրանց կապերն ամրացած են երկկողմեան յարգան-

քով ու սիրով, ուր երկուսն էլ հաւատար իրաւունքների տէր են և երկուսն էլ հպատակւում են միայն ամուսնական վէճ նպատակին: Վարպետն ու աշակերտը, ստրկատէրն ու ստրուկը չեն կարող միութիւն կազմել: Ամուսինները իրաւունք ունին իրարու հաւասար պահանջումներ ներկայացնելու. փեսացուն պահանջում է հարսնացուից լինել մաքուր ու անարատ, հակառակ դէպքում նա հրաժարում է ամուսնակալուց, և այդ մերժումը բոլորն էլ օրինաւոր են համարում: Ինչո՞ւ հարսնացուն էլ չի պահանջում միենոյնը փեսացուից: Պատմական տեսակէտից այդ շատ հեշտ է բացատրել. չկայ մի յուզող փաստ, չկայ այնպիսի կեղծութիւն, որ չունէնա պատմական ոլա տճառներ: Սակայն սրանից դեռ չի կարելի եզրակացնել, որ հարկաւոր է սահմանափակւել պատմական բացատրութեամբ և տարեգրի սառնասրտութեամբ նշանակել այնպիսի արարքներ, որ վրդովում են մեր բարոյական զգացումները: Սկզբում՝ տղամարդիկ, օգտւելով իրենց ֆիզիկական ուժից, յետոյ էլ՝ մտաւոր գերազանցութիւնից, ստրկացրել ու ստորագրել են կանանց. Նրանց յաջողւել է ձեռք բերել արտօնւած դրութիւն, յաջողւել է համոզել կանանց, որ իբր թէ իրենց օրգանիզմը այլ կազմութիւն ունի, իրենք բոլորվին. այլ պահանջներ ունին, քան կինը: Այս համոզումը, սերունդից սերունդ հաղորդւելով, հասել է մինչև մեր օրերը. սա ունի արական սեռից բազմաթիւ պաշտպանողներ և՝ որ աւելի սոսկալին է իդական

սեռից անզամ: Տղամարդիկ, բարձր դասելով կանանց մաքրութիւնն ու ժուժկալութիւնը, և համկանալով, որ բացառապէս անառակութեան նւիրւած մի հասարակութիւն չի կարող գոյութիւն ունենալ, իրաւունքներն ու պարտաւորութիւնները բաժանել են իրենց ու կանանց մէջ, առաքինութիւնը ամուր պահելու, եստայի սրբազնի կրակը պահպանելու պարտաւորութիւնը սրանք յանձնել են կանանց, իսկ իրենց թողել են իրաւունք չնազանդել բարոյական սկզբունքներին, սկզբունքներ, որ հէնց իրենք են կանոննել կանանց համար: Թէ այս աննօրմալ յարաբերութիւններն արդէն վաղուց՝ երկար դարեր են որ գոյութիւն ունին, բայց միայն մի երկարաժամկետթիւնն իրաւունք չի տալիս այդ երևոյթը ճշմարտութիւն համարելու:

Հապա ինչո՞ւ հարսնացուն չի պահանջում փեսացուից մաքրութիւն ու անարատութիւն: Նախ՝ այն պատճառով, որ չի կարելի անիրազործելի պահանջումներ անել, չարժէ որոնել այն, ինչ որ չկայ. բաւական սրամիտ պատճառաբանութիւն. բայց ինչ որ չկայ և ինչ որ չի կարող լինել—բոլորովին տարբեր բաններ են: Որոնել մի շորքոտանի տղամարդ, խենթութիւն կ'լինէր, իսկ պահանջել տղամարդուց բարոյականութիւն—միթէ սա անտեղի է, միթէ մենք այնքան խոր ենք ընկզմել ճահճային տիղմի մէջ, որ չենք կարողանում դուրս գալ ու մաքրել: Երկրորդ հասարակութիւնը ինքը իրաւունք չի տալիս աղջկան

տղամարդուց բարոյական մաքրութիւն պահանջելու: Ենթագրենք, որ նա այդ իրաւունքը չի տալիս, բայց այդ կարելի է ստանալ, կարելի է կուով ձեռք բերել: «Գիտութիւնը հակառակ է մեզ, կասեն ինձ կանայք. երկարատև խորամիտ հետազօտութիւնները վերջնականապէս պարզեցին, որ տղամարդու կազմութիւնը բաւականաշափ տարբերում է կանացի կազմութիւնից, որ տղամարդուն անհրաժեշտ է շռայլութիւնը: Առանց սըսն նա ապրել չի կարող, պէտք է հպատակւել նրա բնութեան պահանջներին, նրա առողջութեան մասին հարկաւոր է մտածել, նրա համար պէտք է զօհել սեպհական անձը, լաւագոյն զգացումները»: Ինքնազօհութիւնը ազնւութիւն է, երբ նրա հիմքը կազմում է վեհ նպատակներ, բայց զօհել իրեն, որպէս զի աշխարհումը տիրէ անառակութիւն, սա ամենաքիչը անխելացիութիւն է:

Դուքս է գալիս, ուրեմն, որ մենք ունինք երկու բարոյականութիւնն մէկը—արական, միւսը—իգական: Միմնոյն արարքը, միմնոյն գործողութիւնը խայտառակութիւն է կնոջ համար, իսկ թոյլատրելի տղամարդու համար. այն ինչ որ կեխտուամ է աղջկան, երիտասարդ տղի համար զարդարանք է. բարոյական մի չափով մեզ ենք չափում, մի այլ չափով—կանանց: Փիլիսոփայական որ սիստեմի հիման վրայ կարելի է արդարացնել այսափ վայրենի աշխարհահայեցողութիւնը: Քրիստոսի պատէրների վրայ չէ հիմնած մեր հայեացքը բարոյականութեան վրայ.

այն Փրկչի, որը ներում է չնորհում ընկած կնոջ, արգելում է տղամարդուն մեղկ աշքերով անգամ նայել կնոջ վրայ: Եթէ ճշմարտութիւնը մեր կողմն է, եթէ մենք իրաւունք ունինք երգըպագելու մեր բնական պահանջներին, եթէ մենք ապրում ենք որպէս հարկն է, ընդունում ենք գէթ, որ ճշմարտութիւնը մէկ է բոլորի համար, թողնենք կնոջ ազատ ապրելու, որպէս մենք ենք ապրում: «Ինչպէս, կասեն ինձ, երիտասարդ աղջիկը պիտի կաֆէշանտաններ յաճախէ, պիտի ներկայ լինի անամօթ մարմաշաբժումների»: Այս: «Աղջիկը պիտի համբուրէ իրաքանչիւր պատհող մարդու հետ»: Այս: «Աղջիկը պիտի անցուցնէ անքուն գիշերներ արբեցուցիչ քեֆերում»: Այս: Իսկ ինչ դուրս կ'գար դրանից. այն, որ աշխարհը կ'դառնար անառակութեան մի ահազին պանդոկանոց, ուր բացի կենդանական յարաքերութիւններից ոչ մի բան չէր լինիլ, ուր չէր լինիլ ընտանիք, ուր հասարակութիւնը կ'ներկայանար էգերի ու որձերի մի հօտ, ուր առաքինութիւն կանւանէր արտաքին գեղեցկութիւնը իսկ սէր—անասնական զգացողութիւնը: Մենք իրաւամբ ենք պահանջում աղջկանից բարոյական մաքրութիւն ու անարատութիւն, մենք իրաւունք ունինք թոյլ չտալու նրան անառակութիւն անելու, բայց իրաւունք ունինք մեզ համար արհամալել մաքրութիւնն ու անարատութիւնը, համարել թոյլատրւած այն ամենը, ինչ որ անթոյլատրելի է կնոջ համար: Եթէ այդ այդպէս է, եթէ անկարելի է, որ

մարդկութեան ցեղի երկու մասն էլ առաջնորդւեն անհաստատ սկզբունքներով, սկզբունքներ, որ հէնց մենք ինքներս ենք ստեղծել մեզ համար, պիտի ասենք, որ մեր բարոյականութիւնը հիմնած է ստի վրայ, չունի ներքին արժէք: Եթէ մենք չ'զգայինք այդպիսի աշխարհահայեցութեան տիսուր հետևանքներն, եթէ մենք չ'նշմարէինք հասարակութեան մօտալուտ այլասեռման ահաւոր նշանները, թերես կարողանալինք հաշտել մեր երկու տեսակի բարոյականութեան հետ: Բայց սերունդից սերունդ յանձնուող ախտը երբէք չի սակաւում ի հարկէ, այլ միշտ զարդանում է: Ախտաւորւած ծնողներն առաջ են բերում աւելի ևս ախտաւորւած զաւակներ: Ի՞նչ կարելի է սպասել այն հասարակութիւնից, որը փարակւած է ամեն տեսակ մարմնական և հոգեկան տկարութիւններով: Նայենք, դիտենք մեր շուրջը, աեսնենք ի՞նչ է կատարելում: Խորհենք մեր մըրկալից երիտասարդական կեանքի պտուղների վրայ: Ի՞նչում է կայանում անառակութեան շօշափելի հետևանքը, անառակութիւն, որին երկրպագում ենք, որից չենք կարողանում հրաժարել: Ընդհանուր թուլութիւն. այն, մենք թուլացած ենք: Սա իւր դէմքը ամեն տեղ ցոյց է տալիս՝ և՛ գրականութեան, և՛ գիտութեան, և՛ դեղարւեստի մէջ. ամենուրէք թագաւորում է նւազամտութիւն. միթէ ընդհանուր թուլութեան մէջ կարող են ծնւել տաղանդներ: Մենք ուժ չունինք մաքառելու մեր սեպհական համոզմունքների համար, արիու-

թիւն չունինք ազնիւ ու ճշմարիտ խօսք յայտնելու, ընդհանուր գործի համար միանալու ուժ չ'ունինք: Մենք թաւալում ենք ցեխի մէջ ինչպէս կենդանի, խոթելով մեր կիթը գետնի մէջ, և չ'ունինք այնքան ուժ, որպէս զի բարձրացնենք մեր գլուխը մեզ վրայ տարածւող պայծառ երկինքը՝ յաւիտենական լոյսի այդ աղբիւրը տեսնելու:

Մենք ուժ չունինք մեր մեղքերի մէջ համոզւելու անդամ, մենք խարեւաներ ու փարիսեցիներ ենք: Ստութեան վրայ է հիմնուած մեր հասարակութիւնը, խարեւայութեան վրայ են կառուցւած տղամարդկանց յարաբերութիւնները դէպի կանայք: Մենք հաւատացնում ենք, թէ սիրում ենք մեր մերժաւորներին, մարդկութիւնը. ոչ, մենք ստում ենք, մենք սիրում ենք միմիայն մեր եսը: Երիտասարդը համոզում է աղջկան, որ ինքը կեանքի ընկերուհի է որոնում. սուտ է, նրան ընկերուհի չի հարկաւոր, այլ մարմին: Փեսացուն երդում է հարսնացուի առջե, թէ նրան պիտի սիրէ յաւիտեան. նա ստում է. նա գիտէ, որ պիտի գաղարէ սիրելուց, հէնց որ կրքերը հագուրտ ստացան: Մենք ասում ենք, թէ յարգում ու սիրում ենք կանանց. դա սուտ է: Զե՞ն յարգում նրան, ուստի և անարժան են գտնում բարձրագոյն կրթութեան, չե՞ն յարգում նրան, ուստի և մերժում են նրան ամենաիրաւացի պահանջումները, ամենաբարենական իրաւունքները: Որին սիրում են, չե՞ն օգտում նրա անօպնական լինելուց, անել գրութիւնից: Զե՞ն փշա-

ցնում սիրած էակին, չեն ծիծաղում նրա ամենասուրբ զգացումների վրայ։ Մենք բարձրաձայն խօսում ենք այն կանանց ստորոտթեան մասին, որոնք պղծում են մեր փողոցները, կնքում ենք նրանց զանազան խայտառակ անունով, բարկանում ենք, յուգում ենք, որ կինը ինքինը ծախում է, գոռում ենք՝ օ խայտառակութիւն։ իսկ այդ խայտառակութեան մէջ չենք զգում միայն մեր սեպհական խայտառակութիւններ։

Եթէ մենք այնքան թանձրամտացել ենք, որ չենք կարողանում լաւը վատից զանազանել, գէթ կինը բարեբախտաբար դեռ. չի կոշտացել։ Նա պիտի ասէ մեզ. «ապրեցէք այնպէս, ինչպէս պահանջում էք մեզնից ապրելու»։ Նա պիտի գիտակցէ իւր իրաւոնքները, պիտի ընդմիշտ բաժանւի հէնց իրեն վնասող հնագոյն հասկացողութիւններից։ Նա պիտի ասէ. ինչ որ պատւաբեր է տղամարդու համար, պատւաբեր է և կնոջ համար, ինչ որ բարոյ է կնոջ համար, բարոյ է և տղամարդու համար։ Պինը ինքը չի ցանկանալ թոյլատրելի դարձնել իւր համար այն ամենը, ինչ որ թոյլատրած է տղամարդուն, նա կ'բողոքէ ոչ թէ միայն իւր աղատութիւնը լայնացնելու համար, այլ և տղամարդկանց աղատութիւնը—անառակութեան աղատութիւնը սահմանափակելու։

Կնոջ սպասում է յամառ ու երկարատե կոխ, կոխ տղամարդկանց անբարոյականութեան դէմ։ Կը ոփուր անխուսափելի է, նա արդէն սկսում ու սկսել է արևմուտքում։ Այստեղ ստեղծուում է նոր շարժում,

կազմում են կանանց ընկերութիւններ ազատութիւն ձեռք բերելու և իրենց բարոյականութիւնը տարածելու տղամարդկանց մէջ։ Հայ կինը գործունեայ մասնակցութիւն պիտի ունենայ այդ շարժման մէջ, շարժման, որին պատկանում է ապագան։ Թող չը սխալւեն կանայք տղամարդկանցից օգնութիւն սպասելու. չէ որ հէնց դրանց հետ պիտի պատերազմել։ Տղամարդիկ շուտ չեն հրաժարելու իրենց էգօխստական թէորեաներից, դարերից իվեր ձեռք բերած արտօնութիւններից։ Պատերազմը խիստ ծանր է, նա պահանջում է զօհեր, շատերը կնդնեն կուի գաշտում, նոր մարտիրոսուհիներ կ'լինեն։ Սակայն դրանք չպիտի հիասթափեցնեն։ Կինը կ'յաղթանակէ, նա դուրս կ'զայ առաջիկայ պատերազմից յաղթահարած, նա դուրս կ'զայ վսեմութեան արծիւով պսակւած, որով հետեւ դա գաղափարի կոխ է, յաւիտենական ճշմարտութեան կոխ։ Կնոջ սահմանւած է զառամեալ աշխարքին նոր կեանքի հոսանք մտցնելու, նրան վիճակւած է փրկելու մեզ անխուսափելի գործանումից։

Թող ուրեմն զօրանայ կինը, թող նա զարգանայ և, զինւելով գիտութեան վերջի խօսքով, պահանջէ հաւասար իրաւունքներ, թող առաջնորդէ մեզ դէպի լուսաւորութիւն, ճշմարտութիւն և բարօրութիւն։



1  
2  
3  
4  
5  
6  
7  
8  
9  
10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31  
32  
33  
34  
35  
36  
37  
38  
39  
40  
41  
42  
43  
44  
45  
46  
47  
48  
49  
50  
51  
52  
53  
54  
55  
56  
57  
58  
59  
60  
61  
62  
63  
64  
65  
66  
67  
68  
69  
70  
71  
72  
73  
74  
75  
76  
77  
78  
79  
80  
81  
82  
83  
84  
85  
86  
87  
88  
89  
90  
91  
92  
93  
94  
95  
96  
97  
98  
99  
100  
101  
102  
103  
104  
105  
106  
107  
108  
109  
110  
111  
112  
113  
114  
115  
116  
117  
118  
119  
120  
121  
122  
123  
124  
125  
126  
127  
128  
129  
130  
131  
132  
133  
134  
135  
136  
137  
138  
139  
140  
141  
142  
143  
144  
145  
146  
147  
148  
149  
150  
151  
152  
153  
154  
155  
156  
157  
158  
159  
160  
161  
162  
163  
164  
165  
166  
167  
168  
169  
170  
171  
172  
173  
174  
175  
176  
177  
178  
179  
180  
181  
182  
183  
184  
185  
186  
187  
188  
189  
190  
191  
192  
193  
194  
195  
196  
197  
198  
199  
200  
201  
202  
203  
204  
205  
206  
207  
208  
209  
210  
211  
212  
213  
214  
215  
216  
217  
218  
219  
220  
221  
222  
223  
224  
225  
226  
227  
228  
229  
230  
231  
232  
233  
234  
235  
236  
237  
238  
239  
240  
241  
242  
243  
244  
245  
246  
247  
248  
249  
250  
251  
252  
253  
254  
255  
256  
257  
258  
259  
260  
261  
262  
263  
264  
265  
266  
267  
268  
269  
270  
271  
272  
273  
274  
275  
276  
277  
278  
279  
280  
281  
282  
283  
284  
285  
286  
287  
288  
289  
290  
291  
292  
293  
294  
295  
296  
297  
298  
299  
300  
301  
302  
303  
304  
305  
306  
307  
308  
309  
310  
311  
312  
313  
314  
315  
316  
317  
318  
319  
320  
321  
322  
323  
324  
325  
326  
327  
328  
329  
330  
331  
332  
333  
334  
335  
336  
337  
338  
339  
339  
340  
341  
342  
343  
344  
345  
346  
347  
348  
349  
350  
351  
352  
353  
354  
355  
356  
357  
358  
359  
359  
360  
361  
362  
363  
364  
365  
366  
367  
368  
369  
369  
370  
371  
372  
373  
374  
375  
376  
377  
378  
379  
379  
380  
381  
382  
383  
384  
385  
386  
387  
388  
389  
389  
390  
391  
392  
393  
394  
395  
396  
397  
398  
399  
399  
400  
401  
402  
403  
404  
405  
406  
407  
408  
409  
409  
410  
411  
412  
413  
414  
415  
416  
417  
418  
419  
419  
420  
421  
422  
423  
424  
425  
426  
427  
428  
429  
429  
430  
431  
432  
433  
434  
435  
436  
437  
438  
439  
439  
440  
441  
442  
443  
444  
445  
446  
447  
448  
449  
449  
450  
451  
452  
453  
454  
455  
456  
457  
458  
459  
459  
460  
461  
462  
463  
464  
465  
466  
467  
468  
469  
469  
470  
471  
472  
473  
474  
475  
476  
477  
478  
479  
479  
480  
481  
482  
483  
484  
485  
486  
487  
488  
489  
489  
490  
491  
492  
493  
494  
495  
496  
497  
498  
499  
499  
500  
501  
502  
503  
504  
505  
506  
507  
508  
509  
509  
510  
511  
512  
513  
514  
515  
516  
517  
518  
519  
519  
520  
521  
522  
523  
524  
525  
526  
527  
528  
529  
529  
530  
531  
532  
533  
534  
535  
536  
537  
538  
539  
539  
540  
541  
542  
543  
544  
545  
546  
547  
548  
549  
549  
550  
551  
552  
553  
554  
555  
556  
557  
558  
559  
559  
560  
561  
562  
563  
564  
565  
566  
567  
568  
569  
569  
570  
571  
572  
573  
574  
575  
576  
577  
578  
579  
579  
580  
581  
582  
583  
584  
585  
586  
587  
588  
589  
589  
590  
591  
592  
593  
594  
595  
596  
597  
598  
599  
599  
600  
601  
602  
603  
604  
605  
606  
607  
608  
609  
609  
610  
611  
612  
613  
614  
615  
616  
617  
618  
619  
619  
620  
621  
622  
623  
624  
625  
626  
627  
628  
629  
629  
630  
631  
632  
633  
634  
635  
636  
637  
638  
639  
639  
640  
641  
642  
643  
644  
645  
646  
647  
648  
649  
649  
650  
651  
652  
653  
654  
655  
656  
657  
658  
659  
659  
660  
661  
662  
663  
664  
665  
666  
667  
668  
669  
669  
670  
671  
672  
673  
674  
675  
676  
677  
678  
679  
679  
680  
681  
682  
683  
684  
685  
686  
687  
688  
689  
689  
690  
691  
692  
693  
694  
695  
696  
697  
698  
699  
699  
700  
701  
702  
703  
704  
705  
706  
707  
708  
709  
709  
710  
711  
712  
713  
714  
715  
716  
717  
718  
719  
719  
720  
721  
722  
723  
724  
725  
726  
727  
728  
729  
729  
730  
731  
732  
733  
734  
735  
736  
737  
738  
739  
739  
740  
741  
742  
743  
744  
745  
746  
747  
748  
749  
749  
750  
751  
752  
753  
754  
755  
756  
757  
758  
759  
759  
760  
761  
762  
763  
764  
765  
766  
767  
768  
769  
769  
770  
771  
772  
773  
774  
775  
776  
777  
778  
779  
779  
780  
781  
782  
783  
784  
785  
786  
787  
788  
789  
789  
790  
791  
792  
793  
794  
795  
796  
797  
798  
799  
799  
800  
801  
802  
803  
804  
805  
806  
807  
808  
809  
809  
810  
811  
812  
813  
814  
815  
816  
817  
818  
819  
819  
820  
821  
822  
823  
824  
825  
826  
827  
828  
829  
829  
830  
831  
832  
833  
834  
835  
836  
837  
838  
839  
839  
840  
841  
842  
843  
844  
845  
846  
847  
848  
849  
849  
850  
851  
852  
853  
854  
855  
856  
857  
858  
859  
859  
860  
861  
862  
863  
864  
865  
866  
867  
868  
869  
869  
870  
871  
872  
873  
874  
875  
876  
877  
878  
879  
879  
880  
881  
882  
883  
884  
885  
886  
887  
888  
889  
889  
890  
891  
892  
893  
894  
895  
896  
897  
898  
899  
899  
900  
901  
902  
903  
904  
905  
906  
907  
908  
909  
909  
910  
911  
912  
913  
914  
915  
916  
917  
918  
919  
919  
920  
921  
922  
923  
924  
925  
926  
927  
928  
929  
929  
930  
931  
932  
933  
934  
935  
936  
937  
938  
939  
939  
940  
941  
942  
943  
944  
945  
946  
947  
948  
949  
949  
950  
951  
952  
953  
954  
955  
956  
957  
958  
959  
959  
960  
961  
962  
963  
964  
965  
966  
967  
968  
969  
969  
970  
971  
972  
973  
974  
975  
976  
977  
978  
979  
979  
980  
981  
982  
983  
984  
985  
986  
987  
988  
989  
989  
990  
991  
992  
993  
994  
995  
996  
997  
998  
999  
999  
1000



2013

22283



